Ծախողները կին են մեծ մասամբ: Օտար անցորդներին նրանք կանչում են անգլիերէն կամ ռուսերէն, բաւական յայտող գուշակելով նրանց ի՞նչ ազգից լինելը:

Նագասակիում օտար լեզուներից ամենից աւելի տարածւածը ռուսերէնն է. դրան նպաստում է կամաւոր ֆլօտի յաճախակի երթեւեկը եւ ռուս ռազմանաւերի այցը:

Բացի դրանից մի ամբողջ ռուսական գաղութ էլ կայ Ինօսա, որ գտնւում է ծոցի միւս կողմը:

⁂

Նագասակիի փողոցներով իմ անցնելը ոչ ոքի ուշադրութիւնը չէր գրաւում: Եւրոպացիներին ընտելացած են արդէն:

Միայն երբ երկար կանգ էի առնում մի որեւէ խանութի առաջ, դիտում էին ինձ ոտից գլուխ՝ զարմանալով երեւի, թէ ի՞նչն էր ինձ այդպէս հետաքրքրողը:

Մի ճապոնուհի նկատելով, որ հայեացքս մի մանաւոր հետաքրքրութեամբ եմ չեչոտում խանութի խորքը, խնդրեց, որ ներս մտնեմ նրա բնակարանը, եթե կը հաճեմ:

Եւ ինչ ասել կ'ուզի, որ մեծ ուրախութեամբ ընդունեցի նրա առաջարկը, եւ նրա հետ մի նեղ ու փոքր անցքով մտանք ետեւի մասը: Դա արդէն բնակարանն էր, մի մեծ սենեակ, որ հեչոտութեամբ կարելի է մի քանիսի վերածել չարժական թեթեւ պատերի միջոցով: Յատակը այդտեղ քիչ բարձր է նախասենեակից: Յետեւելով տեղական քաղաքավարութեանը, հանեցի կօշիկներս սանդուխի գլխին եւ գուլպաներով կոխեցի սենեակի մաքուր խսիրը:

Շուրջը ամեն-ինչ մաքրութիւնից փայլում էր: Թղթէ